



ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ

ԹԻՎ 1935

2022թ.

ք. Էջմիածին

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԷԶՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ <<ՎԱՂԱՐՇԱՊԱՏ>> ԳԿՏ
ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՑԱԾՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԻՑ ԱՎԵԼԻ
ԲԱՐՁՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԻ ՓՈԽԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վաղարշապատի համայնքապետարան է դիմել Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Բաղրամյան փողոցի թիվ 1 փակուղու թիվ 10 տան բնակիչ Սերոբ Կառլենի Մելքոնյանը իրեն, Սիրանուշ Ռաֆայելի Աբրահամյանին և Սուսաննա Կառլենի Մելքոնյանին համատեղ սեփականության իրավունքով պատկանող /հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N17102022-04-0056 տրված 14.10.2022թ./, <<Վաղարշապատ>> ԳԿՏ տարածքում գտնվող /ծածկագիր՝ 04-002-0191-0016/ 0.9հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության ցածրարժեք հողատեսքը՝ վարելահողը ավելի բարձրարժեք հողատեսքի՝ խաղողի և պտղատու այգու փոխադրելու խնդրանքով:

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 57-րդ հոդվածի 2-րդ մասով և Հայաստանի Հանրապետության կառավարության 17.09.2009թ. թիվ 1066-Ն որոշմամբ.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի <<Վաղարշապատ>> ԳԿՏ տարածքում գտնվող /ծածկագիր՝ 04-002-0191-0016/ 0.9հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության ցածրարժեք հողատեսքը՝ վարելահողը փոխադրել ավելի բարձրարժեք հողատեսքերի, որից՝ խաղողի այգի 0.855հա, պտղատու այգի /կորիզավոր/ 0.045հա:

2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Դ. ԳԱՄԱՐՅԱՆ





ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1936

20 հոկտեմբեր 2022թ.

ք. Էջմիածին

ԻՐԱՎՈՒՆՔ ՀԱՍՏԱՏՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ԶՊԱՀՊԱՆԱԾ ԲՆԱԿԵԼԻՏՈՒՆԸ ՆՎԵՐ ՍԻՐԱԶՆԻԿԻ ՄԻՔԱԵԼՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քննարկելով Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի, Ալավերդյան փողոցի թիվ 10/12 տան բնակիչ Նվեր Սիրազնիկի Միքաելյանի դիմումը՝ պարզվեց, որ սեփականության իրավունքով իրեն պատկանող /հիմք՝ 14.01.1988թ. տրված տեխնիկական անձնագիրը և «Կարեն Մաչանյան» ԱԶ-ի /որակավորման վկայական թիվ 0244/ կողմից 03.08.2022թ. կատարված չափագրությունը/, Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի, Ալավերդյան փողոցի թիվ 29 հասցեում գտնվող 0.00611հա մակերեսով /որից՝ 0,00188 հա ընդհանուր համատեղ սեփականություն/ փաստացի առկա սահմանազատված բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասում գտնվող բնակելի տունը, որի նկատմամբ չեն պահպանվել սահմանված կարգով տրամադրված քաղաքաշինական գործունեություն իրականացնելու փաստաթղթերը, կառուցվել են մինչև 2001թ մայիսի 15-ը, ինչպես նաև դրանք չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին և չեն առաջացնում սերվիտուտ:

Հաշվի առնելով վերը նշվածը, հիմք ընդունելով, որ անշարժ գույքը բավարարում է 10.06.2008թ. ընդունված ՀՕ-117-Ն օրենքի 1-ին հոդվածով նախատեսված պայմաններին և ղեկավարվելով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի, Ալավերդյան փողոցի թիվ 29 հասցեում գտնվող 0.00611հա մակերեսով /որից՝ 0,00188 հա ընդհանուր համատեղ սեփականություն/ փաստացի առկա սահմանազատված բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասում մինչև 15.05.2001թ. կառուցված, 80% և ավելի ավարտվածության աստիճան ունեցող բնակելի տունը, որի նկատմամբ չեն պահպանվել սահմանված կարգով տրամադրված քաղաքաշինական գործունեություն իրականացնելու փաստաթղթերը, համարել Նվեր Սիրազնիկի Միքաելյանի /ծնված 15.08.1955թ./ սեփականությունը:

2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ



ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1937-Ա

«20» հոկտեմբերի 2022թ.

ք. Էջմիածին

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԹՎՈՎ 8 ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ԴՐԱՄԱԿԱՆ
ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 48 հոդվածի պահանջներով, հիմք ընդունելով Վաղարշապատ համայնքի ավագանու 18.01.2022թ. թիվ 24 որոշումը և հաշվի առնելով այն հանգամանքը, որ բնակիչները գտնվում են սոցիալապես ծանր պայմաններում, Վաղարշապատի համայնքապետարան են դիմել թվով 8 բնակիչներ ֆինանսական օգնություն ստանալու խնդրանքով:

Անհրաժեշտությունից ելնելով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Վաղարշապատ համայնքի 2022թ. բյուջեի սոցիալական ֆոնդի միջոցներից Վաղարշապատ համայնքի թվով 8 բնակիչների հատկացնել 440000 դրամ դրամական օգնություն համաձայն կից ցուցակի:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում հաստատման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ





ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

20 հոկտեմբեր 2022թ.

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 19384

ք. Էջմիածին

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՅԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, ՀՀ Կառավարության 14.07.2005թ. թիվ 1109-Ն որոշման, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման պահանջներով և հիմք «Կարեն Մաչանյան» ԱԶ-ի / որակավորման վկայական թիվ 0244 / կողմից 06.10.2022թ. կատարված չափագրությունը և Կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հայտի քաղվածքի ծածկագիրը՝ 04002JMHTPM7.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

- Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի սեփականություն հանդիսացող Վ.Տերյան փողոցում գտնվող 0.0937հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք ք. Էջմիածին, Վ.Տերյան փողոց թիվ 910/3:
- Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
- Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ



ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱԿԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1939Ա

31 հոկտեմբեր 2022թ.

ք.Էջմիածին

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387 – Ն որոշման պահանջներով և քննարկելով Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի, Կոմիտասի փողոցի թիվ 39ա տան բնակիչ Նաիրա Մյասնիկի հաշատրյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Նաիրա Մյասնիկի հաշատրյանին պատկանող 04-081-0004-0030 ծածկագրով անշարժ գույքին /հիմք՝ սեփականության վկայական թիվ 2543704, տրված 12.02.2008թ. և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագիրը՝ 04081PTBRY6H/ տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք գյուղ Ոսկեհատ, 3-րդ փողոց թիվ 21 հողամաս:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱԿԱՐ



Ղ. ԳԱՄԱՐՅԱՆ



ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 19404

21 հոկտեմբեր 2022թ.

ք. Էջմիածին

**ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԷԶՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ ԼԻԴԻՑԵԻ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 1 ՇԵՆՔԻ ԹԻՎ 1
ԲՆԱԿԱՐԱՆԻՆ ԿԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՎԱԾ ԿՑԱԿԱՌՈՒՅՑԻ ԵՎ ԻՆՔՆԱԿԱՄ ԲԱՅՎԱԾ ԹՎՈՎ 1
ԲԱՅՎԱԾՔԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ**

Ռազմիկ Սարգսի Մարտիրոսյանի լիազորված անձ Հասմիկ Հովիկի Մարտիրոսյանը դիմել է Վաղարշապատի համայնքապետարան Ռազմիկ Սարգսի Մարտիրոսյանին սեփականության իրավունքով պատկանող /հիմք՝ 25.07.2014թ. տրված թիվ 25072014-04-0024 անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականը, «Ավագ Ավագյան» ԱԶ-ի /որակավորման վկայական թիվ 0331/ կողմից 24.08.2022թ. կատարված չափագրությունը և կադաստրի կոմիտեում հաշվառման ծածկագիրը 2022PKQL43 / Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Լիդիցեի փողոցի թիվ 1 շենքի թիվ 1 բնակարանին կից ինքնակամ կառուցված 29.2քմ մակերեսով կցակառույցի և ինքնակամ բացված թվով 1 բացվածքի օրինականացման խնդրանքով:

Ինքնակամ կցակառույցը կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք: Ինքնակամ կառուցված կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը և վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին 24.12.2021թ. ՀՕ-397-Ն օրենքի 2-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և ՀՀ Կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման պահանջներով:

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

- Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Լիդիցեի փողոցի թիվ 1 շենքի թիվ 1 բնակարանին կից ինքնակամ կառուցված 29.2քմ մակերեսով կցակառույցը և ինքնակամ բացված թվով 1 բացվածքը ճանաչել օրինական, որի համար սահմանված վճարը կազմում է 19 218 / տասնինը հազար երկու հարյուր տասնութ / ՀՀ դրամ:
- Շենքի գրադեցրած հողամասը անհատույց բաժնային սեփականության իրավունքով փոխանցել շենքի բնակարանների և ոչ բնակելի տարածքների սեփականատերերին:
- Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
- Սույն որոշումն ուժի մեջ է մտնում վարույթի ավարտից հետո իրագրվելու և հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Դ.ԳԱՄՊԱՐՅԱՆ



ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 19914

2022թ.

ք.Էջմիածին

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման պահանջներով և քննարկելով Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Սպարապետ Վազգեն Սարգսյան փողոցի թիվ 17 տան բնակիչ՝ Արմեն Ռաֆիկի Բաղդասյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքում գտնվող 04-002-0200-0039 ծածկագրով անշարժ գույքին /հիմք՝ անշարժ գույքի նակատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական թիվ 03092015-04-0022, տրված 03.09.2015թ. և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագիրը՝ 04002E85BJ2V/ տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք ք. Էջմիածին, Վաղարշապատ-Աշտարակ խճուղի թիվ 2/3 հողամաս:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում քննարկմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Դ.ԳԱՄՊԱՐՅԱՆ



ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

21 հոկտեմբեր 2022թ.

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 19484

ք. Էջմիածին

ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Էջմիածին քաղաքային համայնքի և Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Սուրբ Մ.Մաշտոցի փողոցի թիվ 22 շենքի թիվ 34 բնակարանի բնակիչ Արթուր Քյարամի Մխոյանի միջև 23.09.2005թ. /սեղանամատյան 5545/ կնքվել է Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Տերյան-Աթարբեկյան փողոցների խաչմերուկում գտնվող 0:075հա մակերեսով հողամասի վարձակալության պայմանագիր:

Այժմ Արթուր Քյարամի Մխոյանի լիազորված անձ Ջիվան Արսենի Հարությունյանը դիմել է Վաղարշապատի համայնքապետարան Արթուր Քյարամի Մխոյանի կողմից վարձակալված հողամասը վերջինիս ուղղակի վաճառքի միջոցով օտարելու խնդրանքով:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 48-րդ հոդվածի 3-րդ կետի, 66-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով և 2-րդ մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Սուրբ Մ.Մաշտոցի փողոցի թիվ 22 շենքի թիվ 34 բնակարանի բնակիչ Արթուր Քյարամի Մխոյանին ուղղակի վաճառքի միջոցով, հողամասի կադաստրային արժեքով, որը տվյալ պահին կազմում է 2 165 625 /երկու միլիոն հարյուր վաթսուհինգ հազար վեց հարյուր քսանհինգ / ՀՀ դրամ, օտարել իր կողմից 23.09.2005թ. /սեղանամատյան 5545/ վարձակալված Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Ե.Չարենցի 1-ին թաղամասի թիվ 622/1 հասցեում գտնվող /վարձակալության պայմանագրով Էջմիածին քաղաքի Տերյան-Աթարբեկյան փողոցների խաչմերուկում գտնվող/ 0.075հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը:
2. Արթուր Քյարամի Մխոյանի հետ կնքել հողամասի ուղղակի վաճառքի պայմանագիր, որը ենթակա է նոտարական վավերացման, իսկ դրանից ծագող իրավունքները՝ պետական գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Դ. ԳԱՄՊԱՐՅԱՆ



ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1943Ա

21 հոկտեմբեր 2022թ.

ք.Էջմիածին

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387 – Ն որոշման պահանջներով և քննարկելով Աշոտ Հայկազի Հարությունյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Աշոտ Հայկազի Հարությունյանին պատկանող, Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Ա.Մանուկյան թաղամասում գտնվող անշարժ գույքին /հիմք՝ ՀՀ պատգամավորների Էջմիածնի քաղաքային խորհրդի 13.01.1993թ. գործադիր կոմիտեի նիստի թիվ 1 արձանագրության քաղվածքը և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագիրը՝ 04002F47E3X9/ տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք ք.Էջմիածին, Ա.Մանուկյան 1-ին թաղամաս թիվ 281/2 հողամաս :
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ



ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1944X

21.12.2022թ.

ք.Էջմիածին

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387 – Ն որոշման պահանջներով և քննարկելով Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի, Ղարիբջանյան փողոցի թիվ 7 տան բնակիչ՝ Արթուր Ալեքսանդրի Օսիպովի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Արթուր Ալեքսանդրի Օսիպովին պատկանող, Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Ա.Մանուկյան թաղամասում գտնվող անշարժ գույքին /հիմք՝ ՀՀ պատգամավորների Էջմիածնի քաղաքային խորհրդի 13.01.1993թ. գործադիր կոմիտեի նիստի թիվ 1 արձանագրության քաղվածքը և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագիրը՝ 04002PDNQ5J7/ տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք ք.Էջմիածին, Ա.Մանուկյան 1-ին թաղամաս թիվ 281/1 հողամաս:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Դ. ԳԱՄԱՂԱՐՅԱՆ



ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1945Ի

2022թ.

ք.Էջմիածին

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱՂԻԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387 – Ն որոշման պահանջներով և քննարկելով Արթուր Վոլոդյայի Պողոսյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Արթուր Վոլոդյայի Պողոսյանին պատկանող, Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Ա.Մանուկյան թաղամասում գտնվող անշարժ գույքին /հիմք՝ ՀՀ պատգամավորների Էջմիածին քաղաքային խորհրդի 20.12.1993թ. գործադիր կոմիտեի նիստի թիվ 27 արձանագրության քաղվածքը և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագիրը՝ 04002UKBFTL5/ տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք ք.Էջմիածին, Ա.Մանուկյան 1-ին թաղամաս թիվ 259/2 հողամաս :
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Ղ. ԳԱՄԱՂԱՅԱՆ



ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱԴԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱԿԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1946Ա

21 հոկտեմբեր 2022թ.

ք.Էջմիածին

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱՂՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387 – Ն որոշման պահանջներով և քննարկելով Ալինա Գարեգինի Գևորգյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Ալինա Գարեգինի Գևորգյանին պատկանող, Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Ա.Մանուկյան թաղամասում գտնվող անշարժ գույքին /հիմք՝ ՀՀ պատգամավորների Էջմիածնի քաղաքային խորհրդի 20.12.1993թ. գործադիր կոմիտեի նիստի թիվ 27 արձանագրության քաղվածքը և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագիրը՝ 04002VBXLMGB/ տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք ք.Էջմիածին, Ա.Մանուկյան 1-ին թաղամաս թիվ 259/1 հողամաս :
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱԿԱՐ



Դ. ԳԱՄԱՂՈՐՅԱՆ



ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

24.12.2022թ.

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 19494

ք. Էջմիածին

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՅԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, ՀՀ Կառավարության 14.07.2005թ. թիվ 1109-Ն որոշման, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման պահանջներով և հիմք «Ավագ Ավագյան» ԱԶ-ի /որակավորման վկայական թիվ 0331/ կողմից 23.09.2022թ. կատարված չափագրությունը և Կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հայտի քաղվածքի ծածկագիրը՝ 04002MKLVZXQ,

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի սեփականություն հանդիսացող Ե.Չարենցի 1-ին թաղամասում գտնվող 0.075հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք ք. Էջմիածին, Ե.Չարենցի 1-ին թաղամաս թիվ 655/8:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Դ. ԳԱՄՊԱՐՅԱՆ



ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 19484

ք. Էջմիածին

24 հոկտեմբեր 2022թ.

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԿԻՍԱԿԱՌՈՒՅՑ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քննարկելով Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Ա.Մանուկյան թաղամասի թիվ 128 տան բնակիչ Հարություն Պողոսի Թորոսյանի դիմումը պնդելով, որ վերջինս դիմել է Վաղարշապատի համայնքապետարան իրեն և Մերի Արշակի Դավդյանին սեփականության իրավունքով պատկանող /հիմք 16.07.2013թ. տրված թիվ 25102021-04-0036 անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականը, «Կարեն Մաչանյան» ԱԶ-ի /որակավորման վկայական թիվ 0244 կողմից 09.09.2022թ. կատարված չափագրությունը, Կադաստրի կոմիտեում հաշվառման ծածկագիրը՝ 20222DLPDY / Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Ա.Մանուկյան թաղամասի թիվ 128 հասցեում գտնվող 0.0405հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասում, ինքնակամ կառուցված ընդհանուր 100քմ / 100քմ արտաքին, ներքին 92.4քմ / մակերեսով կիսակառույց բնակելի տունը օրինականացնելու խնդրանքով:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին 24.12.2021թ. ՀՕ-397-Ն օրենքի 2-րդ հոդվածով, Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, ՀՀ Կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման պահանջներով և հաշվի առնելով, որ կառույցը կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը և վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման և անվտանգության գոտիներում, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք և չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Ա.Մանուկյան թաղամասի թիվ 128 հասցեում գտնվող 0.0405հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասում, ինքնակամ կառուցված ընդհանուր 100քմ / 100քմ արտաքին, ներքին 92.4քմ / մակերեսով կիսակառույց բնակելի տունը ճանաչել օրինական:
2. Ինքնակամ կառուցված ընդհանուր 100քմ / 100քմ արտաքին, ներքին 92.4քմ / մակերեսով կիսակառույց բնակելի տան օրինականացման համար սահմանված 167 300 / հարյուր վաթսուհյոթ հազար երեք հարյուր / ՀՀ դրամ վճարը սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում չմուծելու դեպքում սույն որոշումը համարել ուժը կորցրած:
3. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում վարույթի մասնակցի կողմից կազմակերպվող հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ



ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐԶԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 19494

24 հոկտեմբեր 2022թ.

ք.Էջմիածին

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387 – Ն որոշման պահանջներով և քննարկելով Վաղարշապատ համայնքի, Էջմիածին քաղաքի, Ա.Մանուկյան թաղամասի թիվ 128 տան բնակիչ Հարություն Պողոսի Թորոսյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի, Էջմիածին քաղաքում գտնվող, 04-002-0913-0005 ծածկագրով անշարժ գույքին /հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական թիվ 25102021-04-0036, տրված 16.07.2013թ. և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հայտի քաղվածքի ծածկագիրը՝ 04002DGGWGLX/ տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք, ք. Էջմիածին, Ա.Մանուկյան 2-րդ թաղամաս թիվ 128 բնակելի տուն:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ



ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ ԷԶՏԾԿ

24 հոկտեմբեր 2022թ.

ք. Էջմիածին

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԷԶՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ ԲԱՊՐԱՄՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 10 ՇԵՆՔԻ ԹԻՎ 3 ԲՆԱԿԱՐԱՆԻՆ ԿԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՎԱԾ ԿՑԱԿԱՌՈՒՅՑԻ, ԻՆՔՆԱԿԱՄ ԲԱՅՎԱԾ ԹՎՈՎ 1 ԴՈՒՆ, 3 ՊԱՏՈՒՀԱՆԻ, 1 ԲԱՅՎԱԾՔԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ԲՆԱԿԱՐԱՆԻ 28.3ՔՄ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՈՒ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Բաղրամյան փողոցի թիվ 10 շենքի թիվ 3 բնակարանի բնակիչ Գևորգ Լևոնի Կարապետյանը դիմել է Վաղարշապատի համայնքապետարան իրեն, Կարինե Վոլոդյայի Դավթյանին և Վարդուհի Լևոնի Կարապետյանին սեփականության իրավունքով պատկանող /հիմք՝ 23.07.2009թ. տրված թիվ 2414877 սեփականության վկայականը, «Կարեն Մաչանյան» ԱԶ-ի /որակավորման վկայական թիվ 0244/ կողմից 04.04.2022թ. կատարված չափազրությունը և կադաստրի կոմիտեում հաշվառման ծածկագիրը 2022MXPEXQ /, Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Բաղրամյան փողոցի թիվ 10 շենքի թիվ 3 բնակարանին կից ինքնակամ կառուցված 24.8քմ մակերեսով կցակառույցի, ինքնակամ բացված թվով 1 դուռն, 3 պատուհանի, 1 բացվածքի օրինականացման և բնակարանի 28.3քմ մակերեսով մասի նպատակային ու գործառնական նշանակությունները փոփոխելու խնդրանքով:

Ինքնակամ կցակառույցը կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք: Ինքնակամ կառուցված կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը և վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին 24.12.2021թ. ՀՕ-397-Ն օրենքի 2-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ Կառավարության 02.02.2002թ. թիվ 88 որոշման և ՀՀ Կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման պահանջներով:

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Բաղրամյան փողոցի թիվ 10 շենքի թիվ 3 բնակարանին կից ինքնակամ կառուցված 24.8քմ մակերեսով կցակառույցը, ինքնակամ բացված թվով 1 դուռը, 3 պատուհանը և 1 բացվածքը ճանաչել օրինական, որի համար սահմանված վճարը կազմում է 33 899 / երեսուներեք հազար ութ հարյուր իննսուսինը / ՀՀ դրամ:
2. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Բաղրամյան փողոցի թիվ 10 շենքի թիվ 3 բնակարանի 28.3քմ մակերեսով մասի նպատակային նշանակությունը փոփոխել հասարակական, իսկ գործառնական նշանակությունը խանութի:
3. Շենքի զբաղեցրած հողամասը անհատույց բաժնային սեփականության իրավունքով փոխանցել շենքի բնակարանների և ոչ բնակելի տարածքների սեփականատերերին:
4. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում վարույթի մասնակցին իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Դ. ԳԱՄԱՐԱՅԱՆ



ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ

ԹԻՎ

19574

Տ. Գ. Խոսրոսյան 2022թ.

ք.Էջմիածին

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԲԱԺԱՆՄԱՆ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387 – Ն որոշման պահանջներով և քննարկելով Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի, Բաղրամյան փողոցի 10 շենքի թիվ 3 բնակարանի բնակիչ՝ Գևորգ Լևոնի Կարապետյանի դիմումը՝ իրեն պատկանող անշարժ գույքը բաժանելու մասին /հիմք՝ սեփականության իրավունքի վկայական 2414877 տրված 23.07.2009թ., «Կարեն Մաչանյան» ԱԶ /վկայական թիվ 0244/ կողմից 04.04.2022թ. կատարված չափագրությունը և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագրերը՝ 040023JRPUCZ, 04002TU8HM7R/.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքում գտնվող Մ.Բաղրամյան փողոցի 10 շենքի թիվ 3 հասցեում գտնվող բնակարանի 77.3 քմ մակերեսով բաժանված մասին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք ք. Էջմիածին, Մ.Բաղրամյան փողոց 10 շենքի թիվ 3 բնակարան, 28.3 քմ մակերեսով բաժանված մասին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք ք. Էջմիածին, Մ.Բաղրամյան փողոց 10 շենք թիվ 3/1 խանութ:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Դ. ԳԱՄՊԱՐՅԱՆ



ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

24 հոկտեմբեր 2022թ.

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 19524

ք. Էջմիածին

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԷԶՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ ԲԱՂՐԱՄՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 10
ՀԱՍՅԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ԲՆԱԿԵԼԻ ՇԵՆՔԻ ԶԲԱՂԵՅՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ
ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ՃՇՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՏԱԿԱԳԻԾ ԹՈՂԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 59-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման և ՀՀ կառավարության 30.11.2006թ. թիվ 1855-Ն որոշման պահանջներով և հիմք ընդունելով «Կարեն Մաչանյան» ԱԶ-ի /որակավորման վկայական թիվ 0244/ կողմից 26.07.2022թ. կատարված չափագրությունը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Բաղրամյան փողոցի թիվ 10 հասցեում գտնվող բազմաբնակարան բնակելի շենքի ծավալից դուրս բնակարանին կամ ոչ բնակելի տարածքին կից ինքնակամ իրականացված կառույցների հողամասերն անհատույց բաժնային սեփականության իրավունքով փոխանցվում են շենքերի բնակարանների և ոչ բնակելի տարածքների սեփականատերերին:
2. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Բաղրամյան փողոցի թիվ 10 հասցեում գտնվող բազմաբնակարան բնակելի շենքի զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ հողամասի փաստացի մակերեսը կազմում է 0.03188հա, որը համապատասխանում է ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1, 2 և 3 ենթակետերի պահանջներին, ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածի սահմանափակումների ցանկում և համաձայն տարածազնահատման համաձայնեցված սխեմայի գտնվում է 9-րդ գոտում:
3. Հողամասի սահմանները որոշվում են սահմանված կարգով հաստատված հատակագծով:
4. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Ղ.ԳԱՍՊԱՐՅԱՆ



ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐԶԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 19534

25 հոկտեմբերի 2022թ.

ք.Էջմիածին

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387 – Ն որոշման պահանջներով և քննարկելով Վաղարշապատ համայնքի էջմիածին քաղաքի, Սպարապետ Վազգեն Սարգսյան փողոցի թիվ 18ա տան բնակիչ՝ Փիրուզա Սուրենի Մուղնեցյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի էջմիածին քաղաքի, Սպարապետ Վազգեն Սարգսյան փողոցի թիվ 18գ հասցեում գտնվող անշարժ գույքին /հիմք՝ սեփականության վկայական 2533524, տրված 18.07.2008թ. և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հայտի քաղվածքի ծածկագիրը՝ 04002GD5CBMV/ տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք ք.էջմիածին, Սպարապետ Վազգեն Սարգսյան փողոց թիվ 18/5 խանութ:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Դ. ԳԱՄԱՐՅԱՆ



ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1954-Լ

«25» հոկտեմբերի 2022թ.

ք. Էջմիածին

**<< ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԳԱՎԱԹ >> ՍԻՐՈՂԱԿԱՆ
ԽՃՈՒՂԱՎԱԶՔԻ ՄՐՑԱՇԱՐԻ ՊԱՐԳԵՎԱՏՐՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅԱՆԸ ՆԵՐԿԱ
ՀՅՈՒՐԵՐԻ ՀԱՄԱՐ ՀՅՈՒՐԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետի և 39-րդ հոդվածի պահանջներով, և հիմք ընդունելով <<Հայաստանի Հանրապետության վարչապետի գավաթ>> սիրողական խճուղավազքի մրցաշարի պարգևատրման արարողությանը ներկա հյուրերի համար հյուրասիրություն կազմակերպելու նպատակով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Վաղարշապատ համայնքի 2022թ. բյուջեով նախատեսված համաքաղաքային միջոցառումների միջոցներից 115.0 հազ. դրամ փոխանցել <<Յոր Իվենթս>> ՍՊԸ-ի հաշվեհամարին՝ նրա հետ կնքած պայմանագրով ֆինանսական պարտավորությունները կատարելու նպատակով:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ



ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵՎԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Թ Ի Վ 1955-Լ

«25» հոկտեմբերի 2022թ.

ք. Էջմիածին

**<< ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԳԱՎԱԹ >> ՍԻՐՈՂԱԿԱՆ
ԽՃՈՒՂԱՎԱԶՔԻ ՄՐՑԱՇԱՐԻ ՊԱՐԳԵՎԱՏՐՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅԱՆԸ ՆԵՐԿԱ
ԼՐԱԳՐՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀՅՈՒՐԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետի և 39-րդ հոդվածի պահանջներով, և հիմք ընդունելով <<Հայաստանի Հանրապետության վարչապետի գավաթ>> սիրողական խճուղավազքի մրցաշարի պարգևատրման արարողությանը ներկա լրագրողների համար հյուրասիրություն կազմակերպելու նպատակով.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1. Վաղարշապատ համայնքի 2022թ. բյուջեով նախատեսված համաքաղաքային միջոցառումների միջոցներից 23.8 հազ. դրամ փոխանցել <<Պիցցա Տաշիր>> ՍՊԸ-ի հաշվեհամարին՝ նրա հետ կնքած պայմանագրով ֆինանսական պարտավորությունները կատարելու նպատակով:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵՎԱՎԱՐ՝

Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ





ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Թ Ի Վ 1956-Լ

«25» հոկտեմբերի 2022թ.

ք. Էջմիածին

**ՓԱՐԱՔԱՐ- ԷԶՄԻԱԾԻՆ ՄԱՅՐՈՒՂՈՒՄ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՀՀ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԳԱՎԱԹ >> ՍԻՐՈՂԱԿԱՆ ԽՃՈՒՂԱՎԱԶՔԻ
ՄՐՑԱՇԱՐԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՀԱՄԱՔԱՂԱՔԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԱՄԱՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետի և 39-րդ հոդվածի պահանջներով, և հիմք ընդունելով ս.թ. հոկտեմբերի 25-ին Փարաքար- Էջմիածին մայրուղում անցկացվող ՀՀ Հայաստանի Հանրապետության վարչապետի գավաթ» սիրողական խճուղավազքի մրցաշարի կապակցությամբ բիոզուգարանների վարձակալության նպատակով.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1. Վաղարշապատ համայնքի 2022թ. բյուջեով նախատեսված համաքաղաքային միջոցառումների միջոցներից 260.0 հազ. դրամ փոխանցել ՀՀ Փայլ Սերվիս» ՍՊԸ-ի հաշվեհամարին՝ նրա հետ կնքած պայմանագրով ֆինանսական պարտավորությունները կատարելու նպատակով:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Ղ. ԳԱՍՊԱՐՅԱՆ





ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Թ Ի Վ 1957X

ԼՏ հոփքեր 2022թ.

ք. Էջմիածին

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՄԲ ԳՈՐԾՈՂ ԹԻՎ 5 <<ԳԱՐՈՒՆ>>, ԹԻՎ 10 <<ՇՈՒՇԱՆ>>, ԹԻՎ 13 <<ԾԻԾԵՌՆԱԿ>>, ԹԻՎ 14 <<ՁՆԾԱՂԻԿ>>, ԹԻՎ 16 <<ՈՍՏԱՆ>> ՄԱՆԿԱՊԱՐՏԵՋ ՀՈԱԿ-ՆԵՐ, Մ. ԵԿՄԱԼՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 1 ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑ, Ե. ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳԵՂԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑ ՀԱՃԱԽՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ԵՎ ԽՆԱՄՔԻ ՀԱՄԱՐ ԳԱՆՁՎՈՂ ՎԱՐՁԱՎՃԱՐՆԵՐԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՕԳՏՎՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՑԱՆԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Վաղարշապատ համայնքի ավագանու 18.01.2022թ. թիվ 24 որոշմամբ, հիմք ընդունելով 2022թ. հունվարի 18-ի արտահերթ թիվ 3 նիստի 27 որոշումը <<Վաղարշապատի համայնքապետարանի ենթակայության մանկապարտեզ ՀՈԱԿ-ներում երեխաների խնամքի համար գանձվող 2022թ. վարձավճարների>>, <<Եղիշե Թաղևոսյանի անվան գեղարվեստի դպրոց>> ՀՈԱԿ-ում 2022թ. ուսման վարձերի գծով արտոնությունների մասին և 2022թ. հունվարի 18-ի արտահերթ թիվ 3 նիստի 28 որոշումը <<Վաղարշապատի համայնքապետարանի ենթակայության երաժշտական դպրոց ՀՈԱԿ-ներում 2022թ. ուսման վարձերի գծով արտոնությունների մասին>>, հիմք ընդունելով Կրթության և մշակույթի բաժնի պետի 24.10.2022թ. գեկուցագիրը, ինչպես նաև հաշվի առնելով Վաղարշապատի համայնքապետարանի սոցիալական աշխատողների ուսումնասիրությունները.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

- Հաստատել Վաղարշապատի համայնքապետարանի ենթակայությամբ գործող մանկապարտեզներ, երաժշտական դպրոց և գեղարվեստի դպրոց հաճախող երեխաների խնամքի և ուսման վարձի համար գանձվող վարձավճարների գծով արտոնություններից օգտվող թվով 18 /տասնութ/ երեխաների ցանկը՝ համաձայն սույն որոշման անբաժանելի մաս հանդիսացող հավելվածի:
- Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ



ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

25 հոկտեմբեր 2022թ.

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1958Ա

ք. Էջմիածին

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԷԶՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ Ե.ՉԱՐԵՆՑԻ 1-ԻՆ ԹԱՂԱՄԱՍԻ ԹԻՎ 812/3 ՀԱՍՑԵՈՒՄ
ԳՏՆՎՈՂ ՊԱՐԻՍՊՈՐՏ, ԾԱԾԿԸ ԵՎ ԴՐԱ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ
ԳՆՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ /ՈՒՂԱԿԻ ՎԱՃԱՌՔ/ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վաղարշապատ համայնքը, համաձայն ՀՀ կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման և համայնքի ղեկավարի 10.10.2022թ. թիվ 1757Ա որոշման առաջարկել է կառույցն իրականացնող անձին՝ Ալբերտ Ռոբերտի Ղազարյանին գնման նախապատվության իրավունքով /ուղղակի վաճառք/ գնել Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Ե.Չարենցի 1-ին թաղամասի թիվ 812/3 հասցեում գտնվող՝ ընդհանուր 18.7քմ / 18.7քմ արտաքին և 18.7քմ ներքին / մակերեսով պարիսպը, ծածկը և դրա պահպանման ու սպասարկման համար զբաղեցրած 0.0758հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը:

Ալբերտ Ռոբերտի Ղազարյանը տվել է իր գրավոր համաձայնությունը՝ գնելու այն, ՀՀ կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշմամբ սահմանված գների՝ 18.7քմ / 18.7քմ արտաքին և 18.7քմ ներքին / մակերեսով պարսպի և ծածկի համար 62 571 / վաթսուներկու հազար հինգ հարյուր յոթանասունմեկ / ՀՀ դրամ և 0.0758հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը կադաստրային արժեքի չափով 2 188 725 / երկու միլիոն հարյուր ութսուներեք հազար յոթ հարյուր քսանհինգ / ՀՀ դրամ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և ՀՀ կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման պահանջներով:

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

- Ալբերտ Ռոբերտի Ղազարյանին գնման նախապատվության իրավունքով /ուղղակի վաճառք/ վաճառել Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Ե.Չարենցի 1-ին թաղամասի թիվ 812/3 հասցեում գտնվող՝ ընդհանուր 18.7քմ / 18.7քմ արտաքին և 18.7քմ ներքին / մակերեսով պարիսպը, ծածկը և դրա պահպանման ու սպասարկման համար զբաղեցրած 0.0758հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը:
- Հանձնարարել քաղաքաշինության և հողաշինության բաժնին Ալբերտ Ռոբերտի Ղազարյանի հետ կնքել առուվաճառքի պայմանագիր, որը ենթակա է նոտարական վավերացման, իսկ դրանից ծագող իրավունքները՝ պետական գրանցման:
- Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Դ. ԳԱՄՊԱՐՅԱՆ



ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1959X

26 հոկտեմբերի 2022թ.

ք.Էջմիածին

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման պահանջներով և քննարկելով Պետրոս Սեդրակի Ամօլեանի լիազորված անձ՝ Վաչե Վաղարշակյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքում գտնվող 04-002-0236-0006 ծածկագրով անշարժ գույքին /հիմք՝ անշարժ գույքի նախատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական թիվ 16122021-04-0030, տրված 16.12.2021թ. և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագիրը՝ 04002N8VDT2A/ տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք ք. Էջմիածին, Երևան-Արմավիր մայրուղի թիվ 4/8 հողամաս:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունվելու օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Դ.ԳԱՄՊԱՐՅԱՆ



ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

26 հոկտեմբեր 2022թ.

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1960X

ք. Էջմիածին

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 06.09.2022թ. ԹԻՎ 1570Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-34-րդ հոդվածների, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի ղեկավարի 06.09.2022թ. <<Անդրանիկ Վարդգեսի Բեգրակյանին պատկանող Վաղարշապատ ԳԿՏ տարածքում գտնվող արտադրական տարածքի պահպանման ու սպասարկման համար անհրաժեշտ 0.17հա մակերեսով հողամասի իրավունքի վերականգման մասին>> թիվ 1570Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

վերնագրում և եզրափակիչ մասերում նշված «0.17հա» բառերի փոխարեն կարդալ «0.1694հա» բառերը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Ք. ԳԱՄՊԱՐՅԱՆ



ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 196/Ա

26 հոկտեմբերի 2022թ.

ք. Էջմիածին

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԷԶՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ Ա.ՄԱՆՈՒԿՅԱՆ 2-ՐԴ ԹԱՂԱՄԱՍԻ ԹԻՎ 10/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՊԱՐԻՍՊԵՐ ԳՆՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ /ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔ/ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վաղարշապատ համայնքը, համաձայն ՀՀ կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման և համայնքի ղեկավարի 06.07.2022թ. թիվ 1140Ա և 13.09.2022թ. թիվ 1610Ա որոշումների առաջարկել է կառույցն իրականացնող անձին՝ Հրաչյա Ալբերտի Հարությունյանին գնման նախապատվության իրավունքով /ուղղակի վաճառք/ գնել Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Ա.Մանուկյան 2-րդ թաղամասի թիվ 10/1 հասցեում գտնվող՝ 4.2քմ /4.2քմ արտաքին և 4.2քմ ներքին/ մակերեսով պարիսպը և դրա պահպանման ու սպասարկման համար զբաղեցրած 0.0105հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը:

Հրաչյա Ալբերտի Հարությունյանը տվել է իր գրավոր համաձայնությունը՝ գնելու այն, ՀՀ կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշմամբ սահմանված գների՝ 4.2քմ / 4.2քմ արտաքին և 4.2քմ ներքին/ մակերեսով պարսպի համար 14 054 / տասնչորս հազար հիստուներս / ՀՀ դրամ և 0.0105հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը կադաստրային արժեքի չափով 303 188 / երեք հարյուր երեք հազար հարյուր ութսունութ / ՀՀ դրամ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և ՀՀ կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Հրաչյա Ալբերտի Հարությունյանին գնման նախապատվության իրավունքով /ուղղակի վաճառք/ վաճառել Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Ա.Մանուկյան 2-րդ թաղամասի թիվ 10/1 հասցեում գտնվող՝ 4.2քմ /4.2քմ արտաքին և 4.2քմ ներքին/ մակերեսով պարիսպը և դրա պահպանման ու սպասարկման համար զբաղեցրած 0.0105հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը:
2. Հանձնարարել քաղաքաշինության և հողաշինության բաժնին Հրաչյա Ալբերտի Հարությունյանի հետ կնքել առուվաճառքի պայմանագիր, որը ենթակա է նոտարական վավերացման, իսկ դրանից ծագող իրավունքները՝ պետական գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ



ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1969Ա

«26» հոկտեմբերի 2022թ.

ք. Էջմիածին

ԱՆՉԱՓԱՀԱՍ ՄԱՐԻ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ԱԼԵՔՍԱՆՅԱՆԻ
ՆԿԱՏՄԱՄԲ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 34-38-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունիսի 02-ի N 631 – Ն որոշմամբ, հիմք ընդունելով Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Վազգեն Առաքին փողոցի 12Ա շենքի թիվ 14 բնակարանի բնակիչ Հեղինե Գեղամի Արթենյանի 17.10.2022թ. դիմումը, Վաղարշապատ համայնքի «Խնամակալության և հոգաբարձության» հանձնաժողովի 21.10.2022թ. թիվ 25 նիստի արձանագրությունը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Վազգեն Առաքին փողոցի 12Ա շենքի թիվ 14 բնակարանի անչափահաս բնակիչ Մարի Հովհաննեսի Ալեքսանյանի /ծնված՝ 24.11.2017թ., ծննդյան վկայական՝ ԱԲ 599593/ նկատմամբ սահմանել խնամակալություն՝ խնամակալ նշանակելով Խաչիկ Հովհաննեսի Արթենյանին /ծնված՝ 23.03.1965թ., ՌԴ անձնագիր՝ 46 11 035749/:
2. Հսկողություն սահմանել անչափահաս Մարի Հովհաննեսի Ալեքսանյանի /ծնված՝ 24.11.2017թ., ծննդյան վկայական՝ ԱԲ 599593/ խնամակալ Խաչիկ Հովհաննեսի Արթենյանի /ծնված՝ 23.03.1965թ., ՌԴ անձնագիր՝ 46 11 035749/ գործունեության նկատմամբ:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ



ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1963Ա

27 հոկտեմբեր 2022թ.

ք.Էջմիածին

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387 – Ն որոշման պահանջներով և քննարկելով Վաղարշապատ համայնքի էջմիածին քաղաքի, Միջուրիսի փողոցի թիվ 30ա տան բնակիչ Աթանես Աբրահամի Բախչագուլովի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի էջմիածին քաղաքում գտնվող, Աթանես Աբրահամի Բախչագուլովին պատկանող անշարժ գույքին /հիմք՝ սեփականության վկայական թիվ 2535910, տրված 02.04.2008թ. և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագիրը՝ 04002DSBGG4U/ տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք ք.Էջմիածին, Ի.Միջուրիսի փողոց թիվ 30/1 բնակելի տուն:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Դ. ԳԱՄՊԱՐՅԱՆ



ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1964-Լ

«27» հոկտեմբերի 2022թ.

ք. Էջմիածին

ՀԱՄԱՔԱՂԱՔԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԱՄԱՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետի և 39-րդ հոդվածի պահանջներով, և հիմք ընդունելով ս.թ. հոկտեմբերի 25-ին ծնվել է Արցախյան 44-օրյա պատերազմում զոհված Ավետիք Կարճիկյանի եղբայրը: Նորածին Ավետին հուշամեդալ նվիրելու նպատակով:

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

- Վաղարշապատ համայնքի 2022թ. բյուջեով նախատեսված համաքաղաքային միջոցառումների միջոցներից 120.0 հազ. դրամ փոխանցել <<Հուշադրամ>> ՍՊԸ-ի հաշվեհամարին՝ նրա հետ կնքած պայմանագրով ֆինանսական պարտավորությունները կատարելու նպատակով:
- Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ղ. ԳԱՍՊԱՐՅԱՆ





ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1965Կ

27 հոկտեմբերի 2022թ.

ք. Էջմիածին

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԸ ՄԻԱԿՈՐԵԼՈՒ ԵՎ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387 – Ն որոշման պահանջներով և քննարկելով Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի, Լերմոստով փողոցի թիվ 12 տան բնակիչ Արամ Մայիսի Վասիլյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Ոսկեհատ գյուղում գտնվող, 04-081-0017-0015 և 04-081-0017-0016 ծածկագրերով անշարժ գույքերը /հիմք՝ սեփականության վկայականներ թիվ 2095081 տրված 25.11.2005թ., թիվ 2095082 տրված 25.11.2005թ. և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագիրը՝ 04081HBPGU5T/ միավորել և տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք գյուղ Ոսկեհատ, 13-րդ փողոց թիվ 1-3 հողամաս:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Դ.ԳԱՄՊԱՐՅԱՆ



ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 19664

24 հոկտեմբերի 2022թ.

ք. Էջմիածին

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԾԱԾԿԸ ԵՎ ՊԱՐԻՄՊԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆԱՅՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին 24.12.2021թ. ՀՕ-397-Ն օրենքի 2-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, ՀՀ կառավարության 18.05.2006թ. թիվ 731-Ն և 912-Ն որոշումների պահանջներով, հիմք ընդունելով Կադաստրի կոմիտեում հաշվառման ծածկագիրը՝ 2022L851WO և «Ավագ Ավագյան» ԱԶ-ի /որակավորման վկայական թիվ 0331/ կողմից 14.02.2022թ. կատարված չափագրությունը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

